## ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մենք հանձնառու ենք ապահովելու և պահպանելու անվտանգ և առողջ աշխատանքային միջավայր աշխատողների, կապալառուների և այցելուների համար և հոգ տանելու շրջակա միջավայրի և հասարակության մասին, ինչպես նաև պահպանելու բնական պաշարները մեր համայնքներում:

Մեր աշխատանքի պաշտպանության, տեխանվտանգության և բնապահպանական նպատակները ներառված են մեր առօրյա աշխատանքների կառավարման մեջ՝

- Սահմանել խնդիրներ, որոնք կստանան նույն առաջնահերթությունը, ինչպես և աշխատանքային և տնտեսական նպատակները և մեր բոլոր գործողություններում ձգտել «զրոյական վնասի»՝ մարդկանց համար և նվազագույն ազդեցության՝ շրջակա միջավայրի վրա.
- Հետևել ընթացակարգերին և չափանիշներին, որոնք հիմնված են Միջազգային ֆինանսական Կորպորացիայի ուղեցույցի վրա, OHSAS 18001 և ISO 14001 ստանդարտներին.
- Կառուցել հարաբերություններ աշխատակիցների, հաճախորդների, կապալառուների, այցելուների և այլ շահագրգիռ կողմերի հետ թափանցիկ հաղորդակցության սկզբունքով.
- Կիրառել շարունակական բարելավման սկզբունքը մեր բոլոր գործողություններում, այդ թվում անցկացնել աշխատանքի պաշտպանության, տեխանվտանգության և բնապահպանության մասով ներքին և երրորդ կողմի աուդիտ.
- Պահպանել բոլոր խիստ ստանդարտները, կանոնները և կանոնակարգերը կամ ՔոնթուրԳլոբալի ներքին ԱՊՏԱԲ-ի ուղեցույցները և ստանդարտները՝ ընտրելով նրանք, որոնք առավել խիստ են.
- Աշխատել մեր հաճախորդների, մատակարարների և գործընկերների հետ ապահովելու զրոյական վնաս, նվազեցնելու ազդեցությունները և բարձրացնելու արդյունավետությունը արժեքային շղթայի ողջ ընթացքի համար.
- Հաստատել, որ մեր ԱՊՏԱԲ ներքին ուղեցույցները և ստանդարտները առնվազն նույնքան խիստ են, որքան նրանք, որ սահմանված են Համաշխարհային Բանկի ուղեցույցներում[1].
- Բոլոր շահագրգիռ կողմերին բաց եղանակով հաղորդել աշխատանքի պաշտպանության, տեխանվտանգության և բնապահպանության վերաբերյալ տեղեկատվությունը.
- Առաջնորդել ընդունելով և կիրառելով ԱՊՏԱԲ ոլորտի լավագույն միջազգային փորձը
- Բարելավել ԱՊՏԱԲ Կառավարման համակարգը՝ Ընկերության գործադիր կոմիտեի կողմից պարբերական քննադատական քննարկումների միջոցով:

Աշխատանքի պաշտպանության, տեխանվտանգության և բնապահպանության ոլորտների նպատակները հաջող իրագործելու համար անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր աշխատակից հանդես գա որպես «Առանց վնասի» ծրագրի դեսպանը և գիտակցաբար ղեկավարի հասարակական և բնապահպանական ազդեցությունները: Ավելին, յուրաքանչյուր աշխատակցի իրավունքն ու

պարտականությունն է վեր հանել ցանկացած գործողություն, պայման կամ վարքագիծ, որոնք համահունչ չեն մեր հավակնությունների հետ:

Ստորագրված է՝

Ջոզեֆ Բրանդտ
ՔոնթուրԳլոբալի նախագահ և գլխավոր գործադիր տնօրեն

Ամսաթիվ՝ հունվարի 30, 2016թ

---

1 Համաշխարհային Բանկի Խմբի բնապահպանության, աշխատանքի պաշտպանության և տեխանվտանգության ուղեցույցներ՝
«ԲԱՊՏԱ ուղեցույցներ» (տես՝ www.ifg.org/ehsguidelines)